ա) աշխատության մեջ Ջ. Թոլանդի արած ծանուցումներով: «Ենամակներ Սիրենին» աշխատության առաջաբանում նա գրում է, որ իր երկու փիլիսոփայական նամակներն ուղղված են եղել ոչ թե մեկ, այլ արքայի մարզկանց: Առաջինն՝ այսինքն աշխատության չորրորդ նամակը, Սպինդոզայի մի երկարատև վիճարանություններից հետո ստիպված գրված նամակն է, քանի որ Թոլանդն այդ վիճարանությունների ընթացքում նկատել էր, որ «այդ փիլիսոփայության ամբողջ կառույցը հիմնադրվել է՝: Ջրուցակիցը պահանջել էր այն նամակները այդ պնդումը, որին էլ պատասխան, Թոլանդը գրել էր հիմնավորել այդ պնդումը, որին էլ պատասխան, Թոլանդը գրել էր սվ... ազնիվ մարդ. - գրում է Թոլանդը, - Հաճույքով ընդունեց, որ Սպինդոզան այդպի Հարցում սխալ է թույլ տվել, և հետևապես՝ նրանից թողդ շուտ քորդ Կարգերում հույնպես»³: «Սակայն, - շարունակում է Թոլանդը, - մի պարն, որը Հայտնի է ոչ միայն իր նշանավոր գիտնականությանը, այլև ազնիվական ծագումով, ծանոթանալով այդ նամակի հետ, որը կոչվում էր «Սպինդոզայի Հերբուսը»... բազմաթիվ գա-

¹ Յիւ. Ա. Դեօրին. Предисловие редактора, Джон Толанд, Избранные сочинения, М., 1927, с. XIII, XXIV; История философии [под ред. Г. Ф. Александрова], Т. 2, М., 1941, с. 240; Г. Կրյակский. Джон Толанд, "Под знаменем марксизма", М., 1924, N 10-11, с. 43.

² Արքունիքում ըստ Գ. Կրյակский, Джон Толанд, "Под знаменем марксизма", М., N 10-11, с. 43.
³ Англияские материалисты XVIII в., Собр. проза, в 3-х томах, Т. 1, М., 1967, с. 68.

⁴ Այսն սեղան:

վտանխոսքեր ստաց ինձ իմ նամակի այն մասի առթիվ, որն անմիջապես վերաբերում էր այդ փիլիսոփային: Դրա հետ մեկտեղ ես էլ ղեկավարվում եմ արտահայտակար նրա (աշխատություն՝ ժ. 9.) վերջին մասի կապակցությունը, որտեղ ես ձևակերպել եմ դրույթ այն մասին, որ չարմամն այնքան նմրատուով է մատրիարիմ, որքան տարածանքությունը, որ որ մատերիան անշարժ, մեռած և անզորմունքայ կամ չէ և չէ կորոզ լինել, այլ կերպ առած՝ չի կորոզ մեղ քայքայման գաղտնի վիճակում: «Նրա որոշ առարկություններին, - գրում է Ջ. Քոլանդը - ես ներկայացրի որոշակի պատասխաններ երբեք որդ նամակում, որը հանդիսանում է ըստ հաշվի Հինգերորդ և մեզ ուղարկվող վերջին նամակը»:

Իսկ Հինգերորդ նամակի սկզբից նույնպես երևում է, որ Ջ. Քոլանդի նամակագիրը ոչ թե Հոլանդացի սպինոզայական է, ոչ Համոզվել է, որ Սպինոզան չարմամ մատերիան արբերում էր իրականում սխալվել է և չարունակում է Ջ. Քոլանդին Հարցեր տալ, այլ մեկը, ում արձագանքը «Սպինոզայի Հերքմանը» Ջ. Քոլանդի մտա առաջնություն է կախածանք. արդյո՞ք այն «բնու՞մ է» նամակագրի «սերիալությունից», թե «Համոզմունքից», քանի որ վերջինս Համոմայն էր Ջ. Քոլանդի կողմից Սպինոզայի քննադատության հետ, բայց Համոմայն չէր Քոլանդի «մատերիան անհրաժեշտարար այնքան ակտիվ է, որքան տարածանք» դրույթի հետ: Սա նույնպես պայանացում է, որ Հինգերորդ նամակի թղթակիցը չարորդ նամակի թղթակիցը չէ: Բացի այդ, կրթի Հինգերորդ նամակի թղթակիցը Հոլանդացի սպինոզայականը լինեք, այդ անհավանական է, որ նա, ընդունելով Սպինոզայի թոլանդայան քննադատությունը, նրան առարկեր ոչ թե Սպինոզայի փիլիսոփայության այլ իդեալիզմի դիրքերից: Ասեմք, օրինակ, պնդեմ, թե «քանի որ բնությունում է մատերիան ակտիվությունը, այգա, ըստ երևույթին, անժամանակ է զերպույն բանականության անհրաժեշտությունը»: Ան նշանակում է, որ Հարցի Հնդիմակ սպինոզայական չէ, քանի որ Սպինոզայի Համակարգում այդպիսի Հասկացություն չկա:

բ) Պրուսական թագուհի Սոֆյա Շառլոտային, նրա մորը՝ Կուրֆյուրստուհի Սոֆյային և Պ. Քեյլին Լայպնիցի գրած նամակներով, որոնցում վերջինս խոսում է իր և Քոլանդի հանդիպումների, գրույցների և նամակագրության մասին:

Հայտնի է, որ Քոլանդը Գերմանիայում և Հոլանդիայում եղած մամանակ թագից հանդիպել է Լայպնիցին, գրույցի, նաև վիճել է նրա հետ: Դեռ ապիլին, 1702 թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսների Լայպնիցի և Պ. Քեյլի նամակագրությունից պարզվում է, որ Ջ. Քոլանդը եղել է Քրոնսիայում, ծանոթացել Պ. Քեյլի հետ և այնպիսից կեկել է Քեյլին՝ բերելով Քեյլի նամակը Լայպնիցին: Քոլանդի և Լայպնիցի համար միմյանք են Հանդիս կեկել թագուհի Սոֆյա Շառլոտան և նրա մայրը՝ Կուրֆյուրստուհին: Համարել նրանք են իրենց գրույցների և նամակագրության մասին հաշվառվությունում ավել թագուհուն և նրա մորը: Ան աչք գրույցներից, նամակներից և վիճակից մնացած մյուս փաստաթղթեր նույնպես Հի՞ք են ապիս կեկելից, որ Քոլանդի վերջնական «նշանավոր գիտնականը» Լայպնիցի է, որի անունը Քոլանդը Անդիպում էր և անհրաժեշտ էր նշատի ունենալով նրա նկատմամբ ուղղակի չի նշել, հավանաբար չի հետո ունենալով նրա նկատմամբ Անդիպում էր քայքայական վերաբերմունքը: Կուրֆյուրստուհի Սոֆյային գրած նամակներում Լայպնիցը Հայտնում է, որ Քոլանդն իր կարծիքը Հայտնել է թագուհուն և այդ կարծիքը Համոմուն է Հարսի, էպիկուրի և Լուկրեցիուսի կարծիքների հետ, որ Քոլանդը Հարսի նման չի ընդունում դատարկությունը և բնության մեջ բացի «Ֆիզիկական»-ից և շարժումից» ուրիշ ոչինչ չի ընդունում: «Բայց ես գտնում եմ, - գրում է Լայպնիցը, - որ մատերիանց բացի, այսինքն այն բանից բացի, ինչը պարզ է և անտարբեր չարմամ նկատմամբ, անհրաժեշտ է որտեղ գործունեության ընկալման և կարգի աղբյուրը»: Բացի այդ, այդ նամակներից երևում է, որ մատերիան և չարմամ մասին Ջ. Քոլանդի արտահայտած մտքերն այնպիսի հնարաբեղություն են առաջացրել, որ այդ Հարցի մասին իրենց կարծիքն են Հայտնում ոչ միայն Լայպնիցը, այլև թագուհին, նրա մայրը, նույնիսկ պալատականները, օրինակ կոսմ Տյեմեկերը:

Վերջապես, Պ. Քեյլին գրած նամակում Լայպնիցը նշում է, որ Ջ. Քոլանդը գտնում է, որ «մատերիան կարող է մտածող գտնուլ», որ «որոշակիորեն կազմակերպված մատերիան ընդունակ է արտաբերել միտք: Իսկ երբ այդ կազմակերպվածությունը կործանվում է, միտքն անհետանում է»: Կ) Այդ նամակներում Ջ. Քոլանդի ուսմանը հիմ Լայպնիցի նման առարկությունների և Քոլանդի աշխատության Հինգերորդ նամակի թղթակցի Հարցադրումների ընհանրությունը:

¹ Английские материалы XVIII в., Собр. произв. в 3-х томах, Т. 1, с. 69.

² Լույս տեղում.

³ Լույս տեղում, էջ 154.

⁴ Լույս տեղում, էջ 155.

¹ Лейбниц Г. В. Сочинения в 4-х томах, Т. 3, М., 1984, с. 586.

² Տե՛ս Լույս տեղում, էջ 380-394.

³ Տե՛ս Լույս տեղում, էջ 346-347.

Պրուսական թագուհուն, նրա մոր և Բեյլին Լայբնիցի Հացեղարուն համակերպիչ երևում է, որ Ջ. Թուլանդի Հես գրույցների և վիճարկութեամբ լինող ընթացքում Լայբնից անաշարժում է Հիմնականում Հետևյալ խնդիրները. ա. քանի որ մատերիան պատվի է և անտարբեր շարժման նկատմամբ, ապա բացի նրանից պետք է փնտրել զործուծություն ընկալման և կարգի աղբյուրը. բ. ինչ է հասկանում Թուլանդը մատերիայի ակտիվություն, զործուծություն, շարժում անելով: Կարո՞ղ է նա սահմանել շարժումը, չէ՞ որ կան Հնուց կեղծ շարժման տարբեր ըմբռնումներ, գ. ուրիշ¹, սրբյուր, կա իր սեռակերտ մատերիայի ակտիվության ազդույցներ: Չէ՞ որ մենք կարող ենք մատերիան պատկերացնել նաև անշարժ, որ մենք Թուլանդը չի Հիմնավորում մատերիայի ակտիվության իր սեռակերպ, այս կարգը է միայն սակ, որ դա իր կարծիքն է և ոչ թե Հայտարարել միակ ճշմարտություն: Վերջպես, քանի որ «մատերիայի մեջ գոյություն ունեցող շարժման առաջնական սեռակերպից պետք է վերազդել իրերի ընդհանուր պատճառին, այսինքն Աստուծուն» և նա «տիպիկական մեխանիկով սկզբնաշարժիչն է», ապա մատերիայի ակտիվության ընդունումը կարող է ասանել նրան, որ անհանուր պերագույն բանականության անհրաժեշտությունը²: Եթե ուշադրություն դարձնենք միայն երևույթների վրա, ապա Հոգին մատերիական դիտող մատերիալիտետան ուսումնաբեր, կարծես թե ճշմարտ է³, բայց, այնուամենայնիվ, միտքն սկզբունքորեն տարբերվում է մատերիայից, և անհանուր մեղքում էլ չբաղանջ տարբերում է միայն քանակական և չի կարող ընկալել իրեն: Այդ պատճառով էլ նույնիսկ մատերիայի ակտիվության ընդունումից Հետո էլ, ըստ Լայբնիցի, սխալ կլինի պնդել, որ կյանքը կապիտալիզմով մատերիալ է և որոշակի կազմակերպվածության մատերիան կարող է մատնել⁴:

Ահա, այս հարցերին էլ Հիմնականում պատասխանում է Թուլանդը իր աշխատության Հինգերորդ համակում: Իհարկե, համակում Թուլանդը թեթևակից անաշարժում է նաև հարցեր, որոնք այստեղ չեն արտացոլվում Հատկապես՝ դատարի տարածության և բացարձակ զուտրի մեջ գտնվող մարմինների ակտիվության մասին, որոնք նաև չեն բխում Լայբնիցի փոխադրյալից: Համոզուծություններից: Եվ պետք է սակ, որ Թուլանդը երկու կանգ է ասնում այդ հարցերի վրա ու նրանց պերլուծություն մընջելով վերջպես հասնում է իր ուսմունքի Հիմնավորմանը: Բայց քանն այն է. որ Լայբնիցը, Թուլանդի Հես վիճարանելիս, նրան նեղը գցելու նպատակով

¹ Լեյբնից Գ. Մ. Գլխ. աշխ., 386-388.

² Լույս տեղում, էջ 223, 384.

³ Լույս տեղում, էջ 331.

⁴ Լույս տեղում, էջ 346-347, հ. 3, էջ 378:

Հեսիս օգտագործում է նաև այնպիսի փաստարկներ, որոնք չեն բխում նրա փոխադրյալությունից: Օրինակ, կուրթյուրստուն Հուֆյալյին ուղղված համանկերում նա ոչ միայն հարգում է, որ ինքը թագուհուն համակ է գրել, «որտեղ չհիշատակելով»⁵ Թուլանդի անունը Հիշեցնում է, որ աշխարհը բացատրելու Համար անհրաժեշտ է ընդունել ինչ-որ ավելի բան, քան ընդունում են մատերիալիստները, այլև, որ ինքը Հատուկ համակ է գրել «որպեսզի պարան Թուլանդին ավելի ան փայլել արամությունը»⁶: Սա Հիսի է աշխ կենթադրելու, որ Լայբնիցը մատերիայի ակտիվության և ինքնաշարժման Թուլանդի մատերիալիտետան ուսումնաբեր Հերքելու Համար չի անհամապատասխան միայն իր փոխադրյալության շրջանակներում, այլ անաշարժ է նաև ուրիշ փաստարկներ և, Հատկապես, Ջ. Լուկեի և Նյուտոնի Համար կարգերում ընդունված այնպիսի դրույթներ, որոնք Հակասում էին Թուլանդի ուսմունքին, որնք չէր ընդունում նաև ինքը, բայց որոնք, Հիմնադրաբար, Լայբնիցի կարծիքով կարող էին ճշմարտությունում ոտանուլ միայն իր Համակարգում: Դա ազդուցում է նաև Թուլանդի աշխատությունում փաստարկի մեխանիզման մեք: Այն այսպիսի անք ունի. «... ստակից դիտեական փոխադրանքից շատերը ընդունում են դատերիալությունը, իսկ այդ հասկացումները, ըստ երևույթին, ենթադրում է մատերիայի... անզորունյա բնույթը»⁷: Հասկանալի է, որ այդ դրույթը Թուլանդի ընդդիմադիր կարծիքը է. քանի որ նա չէր ընդունում գոտարկությունը:

Այսպիսով, կարելի է կարգակցել, որ Ջ. Թուլանդի «Համակներ Սերերին» աշխատության Հինգերորդ համակի ընդդիմադրող Լայբնիցն է և Թուլանդը մատերիայի ակտիվության (զարժումն բնույթի) և ինքնաշարժման, շարժման բացարձակությունը ու Հանգստի Հարաբերականության դրույթներին պակաս դրույթները Հիմնավորել է Լայբնիցի Հես վիճարանելիս Թուլանդի «որոշ չափով նաև նրա ազդեցությամբ»: Այդ ազդեցությունը Հատկապես երևում է ժամանակի և տարածության մասին Թուլանդի Հայտարարումում: Նա գրում է. «... ես չեմ կարող Հիմնավորաբար բացարձակ տարածությունը, որն իբր գոյություն ունի մատերիայից անկախ և զետեղում է նրան իր մեջ, ինչպես չեմ կարող Հայտատայ նաև, որ կա բացարձակ ժամանակ, ինքնից կորած, որոնց սեռություն ժամին խոսքը գնում է»⁸: Ճիշտ է, սա բխում է Թուլանդի ուսմունքից, բայց նաև Լայբնիցի Հես օգտակար վիճարանության արդյունք է: Լայբնիցի ազդեցությունը երևում է նաև Թուլանդի օգտագործած տերմիններում, իհարկե, այնքանով, որքանով Հարցադրումները պայմանավորում են պատասխանների բնույթը: Օրին-

¹ Լեյբնից Գ. Մ. Գլխ. աշխ., 386-388.

² Англиские материалы XVIII в., Сообр. произв. в 3-х томах. Т. 1, с. 159.

³ Տե՛ս նույնը, էջ 165:

նակ, Լայրնիցը Հանձնի օգտագործում է «գործողություն» բառը: Նա թվանդանի Հանձնի Հարցանքն է, թե որն է «գործողության աղբյուրը», և թվանդան է Հանձնի օգտագործումն է ոչ թե ակտիվություն (activity), այլ գործողություն (action) բառը¹:

Այսպիսով, ե՞՞ Լայրնիցը, ե՞՞ թղանդը, կանգնելով դարձ գիտական փոխհոսանքական պրոբլեմային իրադրությունն առջև, կանստափորն ու պատասխանել են զրան տարբեր դիրքերից: Նրանց երկուսին էլ չի բավարարում շարժման միջև այդ եզրան բացատրությունները: Երկուսն էլ Հասկանում են, որ մատերիայի շարժման պատճառն նրա մեջ է և շարժել ուն տեղափոխում են մատերիայի, իրի մեջ: «Ընդունելով այն նախադրյալ սխալը... դրում է թղանդը», որ իր թե շարժումը մատերիայի Համար ինչ որ արտաբերի բան է, զուր նշում էր, որ այդ նախադրյալի վրա կառուցված սովորական սահմանափակող շատ է օժանդակել մարդկանց մաքրել ազդված Հայացքի արժանավորմանը: Եվ թե ինչն այնպես են սովորել... մատերիան զրկել շարժումից, որ դա նրանցից խել է այդ... սկզբունքը կազմի մեթոդիկալ ամեն մի Հնարավորություն»²:

Միամասնակ Լայրնիցն ու թղանդը բամանվում և Հակադրվում են շարժել ուժի բնույթի Հարցում: Լայրնիցը նրա մակարդակում նորից զեմում է նրա իդեալիստական բացատրությանը, պնդելով, որ ճիշտ է «չորմիչ պոսեմիցիայի գործողությունը և մարմնական երևույթները միշտ կարող են բացատրվել մեխանիկորեն, բայց շարժման օրենքների պատճառները չեն կարող բեկեցվել «միայն պատիվ մասսայից և նրա ձևափոխություններից», քանի որ նրանք բնում են ավելի խոր սկզբունքներից»³: Ի տարբերություն Լայրնիցի, թղանդը, հիշելով Նյուտոնի «փոխհոսանքային կոնսեկվենց», պատճառ է, որ բացի Համարիտա և երևույթների բացատրություն Համար բավարար պատճառներից, այլ պատճառներ չպետք է փնտրվեն Իսկպակն, կթի մատերիան ակտիվ և գործունյա չէ, ապա Լայրնիցը սխալվում է՝ ապիտ, որ յուրաքանչյուր մատերիական սուբստանց բաղկացած ակտիվ մեկն է պատիվ մատերիայից: Իսկ քանի որ այդ ակտիվ մեկ գոյությունը նու թեթևորում է հեղելով Հենց մատերիական մարմինների ակտիվությունից, սառա շատ ակտիվ ճիշտ է ակտիվությունն ու ուժը մատերիային վերագրելը: Թղանդի կարծիքով մատերիական աշխարհում գիտելի ներքին էներգիան, ուժն ու ակտիվությունը Լայրնիցը չի կարողանում վերագրել մատերիային որոշակի փոխհոսանքային «Համընդհանուր ընդունելություն գտած Համար» պատճառով, որ մատերիան պատիվ սուբ

ստան է չի կարող իր շարժման պատճառ լինել⁴: Եվ ճիշտն որ փոխհոսանքը Հարյուրավոր Հիպոթեզներ են առեղծվ շարժվող մատերիայի շարժումն այլ սուբստանցի օգնությամբ բացատրելու Համար⁵: Այնուամենայնիվ, փորձ ու բանականությունը ապացույցում են, որ մատերիան ամենուր Հանձն է բերում ուժ, գործողություն, ակտիվություն: Եվ միև աշխարհում գիտելի շարժումն ու փոփոխությունը բացատրվում են մատերիայի ակտիվությամբ, ապա չպետք է փնտրել և ընդունել այլ պատճառներ:

Ի դեպ, յուրաքանչյուր մարմն, մատերիայի մասնիկն մեջ ակտիվ պղծի առկայությունն շարժել Լայրնիցի ուժումները, բառ էր պակաս, նշանաւոր էր մատերիայի մասնիկն պրոբլեմի լուծման Հասունացում, «շարժումը մատերիայի աարբերուն է» գրոյթի նախադրում: Եվ թղանդը օգտվում է նաև Լայրնիցից: Նա գրում է. «... ակտիվությունը միանունն է ակտիվ բնական և ներհատակ է... տիեզերական մատերիական ըլուր մեկնին»⁶:

Համեմատելով Դեկարտի, Նյուտոնի և Լայրնիցի Համակարգերը՝ Բ. Գ. Կուլեցկոյը նշում է, որ Դեկարտի մտտ աշխարհի կառուցվածքը Հիմնված էր շարժման վրա: Նյուտոնյան ատոմիստական աշխարհի կառուցվածքը ներկայացնում է ավելի ու ավելի ուժեղ ուժային փոխազդեցություն Հեծարտիսա: Սակայն, Նյուտոնի մտտ ոչ թե շարժումն է աշխարհի կառուցվածքի Հիմքը, այլ ուժը: Նրա Համակարգում ուժերը տարածական սուբստանցի մոդուսներ են⁷: Ստացվում է, որ ուժը և ակտիվությունը տարբերվելու ատանանցվել են շարժումից, որովհետև շարժումը գիտելի է միայն օտարական տեղափոխություն: Այդ պատճառով էլ Լայրնիցը զրանք դիտում է Հոգևոր սուբստանց: Բայց Թղանդը ընդունում է միայն մատերիական սուբստանցի գոյությունը, որի աարբերուսանքն են ինչպես տարածականությունն ու անթափանցելիությունը, այնպես էլ՝ շարժումը: Սակայն նա շարժումը ներկայացնում է ոչ թե տարածական տեղափոխության, այլ ուժի, գործողության, էներգիայի և ակտիվության իմաստով: Դրանով Թղանդը ընադիրության կողմից մատերիայի մեջ Հայտնաբերված ուժն ու ակտիվությունը, որի օտարվում էր նրանից, վերադարձնում է մատերիային, շարժումը Հայտարարելով մատերիային ներհատակ Հատկություն: Նա գրում է. «... անհրաժեշտ է տարբերել ամեն մի մատերիայի ներքին էներգիան, ինքնաշարժում կամ էլ ակուն ակտիվությունը (essential action), սառաք որի այն չի կարող ներթափվել ոչ մի ատանանք փոփոխության կամ բամանան, այն տարածական շարժումներից կամ տեղափոխություններից:

¹ Английские материалисты XVIII в., Собр. произв. в 3-х томах. Т. 1, с. 156.

² Տե՛ս նույնը, էջ 152, 171, 174:

³ Տե՛ս նույնը:

⁴ Английские материалисты XVIII в., Т. 1, с. 155.

⁵ Տե՛ս նույնը, էջ 179-182:

⁶ Տե՛ս նույնը, էջ 157:

⁷ Տե՛ս Կուլեցով Բ. Գ., Ньютон, М., 1982, с. 135-136:

որոնք իրենցից ներկայացնում են միայն էական ակտիվության տարրի մոդիֆիկացիաները»¹:

Բերստանկական աշխարհում, հրկար դարերի բնթացքում, եթե որևէ մասնող աշխարհում զիտվող երևույթների պատճառները տեսել է կալ փնտրել է Հենց աշխարհի մեջ, ապա նրա աշխարհայացքը Հանձան ձևաբլ բերել զհիստական կամ պանթիստական բնույթ: Դեհատական բնույթ ունի ինչպես Լալրնիքի փիլիսոփայական Համակարգը, այնպես էլ Ջ. Քոլանդի փիլիսոփայական ուսմունքը: Սակայն նրանք Հակադրվում են շարժման բնույթի Հարցում: Լալրնիքի Համակարգում զերկմը «ապահովվում է» Հատկապես նախատեսված ներդաշնակության ուսմունքի միջոցով: Բայց նա զհիստական մոտեցում ունի նաև այլ Հարցերում: Մասնավորապես, Հարժման Հարցում գտնում է, որ «մատերիալի մեջ գտնվող Հարժույթ առաջացման տեսակետից» պետք է վերադրել Ատոնուն, բայց յուրաքանչյուր կրկնրես զեղբում այն պետք է վերադրել ուժին, որն Աստված ավել է իրերին: Ստիպան «գործունեության բնկայման և կարգի» աղբյուր Հանդիսացող այդ ուժը Լալրնիքը Հակահում է Հողեր իմաստով, որն տեսնում է ձև, մտեղա, էնտելեխիա և այլն, որը Համայույժ է մարմիններին «...Ասել, որ Աստված արարչագործության մասնակ մարմիններին տվել է գործողության օրենք, - գրում է Լալրնիքը, - նշանակում է, որ... նա մի-մասնակ նրանց տվել է ինչ որ բան, որն ապահովում է այդ օրենքի պահպանումը, այլապես նա միշտ արտակարգ ձևով պետք է Հողա նրա պահպանման մասին»²: Այսինքն, նա մարմիններին «տվել է ներքին ուժ»³: Ի՞նչ մատերիան ինքնին պատիվ է, ակտիվ է միայն ոչ մատերիականը:

Ջ. Քոլանդի մոտեցումն այլ է: Նա գտնում է, որ մատերիան ինքնին պատիվ, տեղաբունյա, մեռած կալ է, որ մատերիալին ներհատուկ է շարժումը, որը Հանձան տեսնում է ակտիվության և մատերիալի Հիմնական աղբյուրում է Համարում ինչպես տարածականությունն ու անթիվանքի լիությունը, այնպես էլ Հարժումը, որի միջոցով շատ ավելի Հեշտ և լավ կրացատրվի աշխարհի բազմապատկությունը: Իսկ այստեղ Աստծո մասին տեսնումստիվիտեն առաջացող Հարցին պատասխանում է, որ ինքը չի ուզում մասնակցել այն վեճերին, որոնք տարվում են մատերիալի առաջման կամ Հակոտենեականության վերաբերյալ: Բացի այդ, նրանք, ովքեր մատերիան Համարում են արարված, կարող են յուրովի Համատալ, որ Աստված սկզբնապես մատերիալին օժտել է ակտիվությամբ, ինչպես արածականությամբ: Իսկ նրանք, ովքեր մատերիան Համարում են Հակոտ

¹ Английские материалисты XVIII в., Т. 1, с. 171.
² Лейбниц Г. В. Сочинения в 4-х томах, Т. 3, с. 223.
³ Տե՛ս նույնը:

նական, կարող են յուրովի ենթադրել, որ այն Հակոտյան ակտիվ է: Այնպես որ, իր Համար կարևորն ապացուցելն է, որ ակտիվությունը մատերիալի էական և կարևոր Հատկությունն է: Աշխատության վերջում Քոլանդը, կարծես թե իր զերկմի կողմնակից լինելը Հիմնավորելու Համար, զերազույցն բանաստեղծության անհրաժեշտությունն ապացուցում է տեղյակ զհիստական ձևով: Նա գրում է. «Մի՛թե կենդանիներն և յուրյանի առաջացումը կարող է ավելի մեծ Հակո՞վ բացատրվել... ակտիվությամբ, քան... միայն տարածակա-նությամբ... Ատոմներն ոչ մի ընդհարում նույնիսկ ամենաբարենպաստ պայմաններում չի կարող... ստեղծել ծաղիկի կամ ճանճի կազմակերպվածությունը»⁴: Քվում է, թե Քոլանդի վերջին մտերը ազդիվ չեն, ինչպես պնդում է մարքոստական գրականության մեջ⁵: Բայց ի նկատի ունենալով մասնակի դիտության զարգացման մակարդակը, կարծում ենք, ավելի լավ պետք է վերաբերվել նրա զհիստական փաստարկներին:

⁴ Английские материалисты XVIII в., Собр. произв. в 3-х томах, Т. 1, с. 152-153.
⁵ Տե՛ս նույնը, էջ 195:

ՎԱՂ ԲՐԻՍՈՆԱԿԵԿԸ ԼՅԵՐՉԱԾՆԵՐԻ ԳԵՎԷՎՈՐԱԿԸ ՀՈԳԵՎՈՐ-ՀՈՍԵՐԿԵԿԸ ԼՆՍՔԵՐԸ

Գ. Ա. Սարգսյան

Առաջին կերպ դարձրում աստվածարանական մտքի աստիճանական ձևավորումն ընթացել է ստանդերի Համայնքների ներսում ձափախված դավաճարանական թիվ պայթյունով:

Սակայն այդ գործընթացը չի կարելի օճահամաբախել միայն Հոգևոր ոլորտով: Թեև այդ պայթյունում Հոգևոր գործոնն առանցքային նշանակություն է ունեցել, այնուհանդերձ պետք է ընդունել, որ ժամանակի աստվածարանական վիճարանություններն աչքի են ընկել ընդգծված բազմապատկերությամբ: Իս մի գործընթաց էր, որը ձևավորվել էր անսխի մշակույթի փոխափայլական-տեսական մտքի և միաստվածության տարրեր ըմբռնումների խաչավորման հետևանքով: Իսկ այդ ամենից տրամաբանորեն հետևում է, որ քրիստոնեական աստվածաբանության կարծրատիպի ձևավորումը չէր կարող մշակույթային դասարկության մեջ ընթանալ: Հակառակ, այն ձևավորվեց զարգացած Հասարակության մեջ՝ Հոռոմեական կայսրության Հասարակական-տնտեսական, քաղաքական և Հոգևոր-գաղափարական պայմանների ազդեցությամբ, որ անսխի մշակույթային ավանդույթներն և աշխարհայացքը խոր ազդեցություն էին թողել Հասարակական գիտակցության և Հոգեբանության վրա:

Այդ ամենը Հանդերձ չի կարելի անտեսել և այն, որ քրիստոնեական հասարակության հանձնարարական ձևերն և արտաքին Հակասություններն ու գաղափարական խոր ճնշման ազդեցիկ միջոցներ էին պահպանում Հասարակության Հոգևոր կյանքում սեղ գրած անհունային տրամադրությունները Հաղթահարելու Համար Այդ պայմանների թելադրանքով՝ աննախադեպ վերելք ապրեցին կրոնական գգաքմունքները: Հոռոմեական կայսրության շրջանակներում ձևավորված այդ իրավիճակը մի կողմից խթանեց փոխտոբյակական-տեսական միտքը, որը Հարցի լուծման իր որոնումներում ասպարեզ Հանեց Հայքը:

կարգային լուծում-առաջարկներն մի ողջ բազմազանություն, իսկ մյուս կողմից՝ հիմք դարձավ կրոնական սինկրետիկ շարժումների Համար: Սակայն, ժամանակի կրոնա-փոխտոբյակական ուսումնասիրեն, իրենց ներհասակ սահմանափակություններով, չի վիճակի չլին այնպիսի «Հոգևոր լուծումներ» կամ էլքեր առաջարկել, որանք կկարողանային իրենց կողմը դրավել Հասարակական տարրեր խմբերի և շեքտերի ներկայացուցիչներին:

Դրա պատճառներինց մինչ էլ այն էր, որ «Այդ գործընթացների հետ միասնական նկատվում էր նաև մեկ այլ միտում. Արևելքից Արևմուտք էր քափանցում և ասարածվում կրոնական ուսումնասիրեն, պաշտամունքների և միասնականության արևելք: Այդ ուսումնասիրեն ու պաշտամունքները, կայսրության տարածքում ներառվածան ու զարգացման Համար ամենուր քարտեզագրում էր ու միջուրտ գտան և փոխթափանցեցին մեկը մյուսի մեջ՝ կրոնական այդ բազմազանության մեջ իր Հոգևոր արժեքահարգով առանձնահատուկ սեղ էր գրավում Հասարակության քրիստոնեությունը: Հանդես գալով «ձափուր կրոնի» որակով՝ քրիստոնեությունն աչքի էր ընկնում անհրժեշտ ինտելեկտուալ մակարդակով և ճիշտ կերպով կարողանում էր միջանց Համազրել իր և նախորդ ժամանակի մերձավորարևելյան և միջերկրածովյան արեալի կրոնական Համակարգերի նվաճումները: Հոգևոր այդ յուրահատուկ կարծրատիպերի շեքտիզմի քրիստոնեությունը կարողացավ Հակադիր դիրք գրավել նաև անսխի մշակույթի և փոխտոբյակական շրջանակներում մշակված մտային ու տեսական մտքի նկատմամբ, որն իր ինտելեկտուալիզմով, ունիվերսալությամբ ու քննական վերլուծություններով աննախադեպ ազդեցություն ուներ ժամանակի Հոգևոր կյանքի բոլոր ոլորտների վրա:

Այդ Հակադրության պատճառն, անհասկամ, այն էր, որ քրիստոնեությունը Համար Աստված բնությունից վեր կանգնած անդրաշնչական էություն էր, այն ղեկավարում, երբ անտիկ շրջանի մարդու Համար վտարի, մտքի և զգացմունքների շարժիչ ուժ էր Համարում այն Համոզունքը, որ աստվածային իմանենտ է բնութայնք, իսկ բնությունը սերտորեն կապված է Հասարակության հետ՝: Եվ նախած այն բանի, որ I-3-րդ դարերում Հոռոմեական կայսրության շրջանակներում դրոյթության ունեց սերտ կապ փոխտոբյակական Հայնչակարգերի և կրոնապաշտամունքային Համակարգի միջև, պետք է նշել, որ նրանք զարգացում և փոփոխվում էին ներքին տրամաբանությամբ:

¹ St'u, ohrbikh *Apokrifov drevnaya khristian.* M., 1989, c. 6-33; **Донини А.** У истоков христианства (от зарождения до Юстиниана), М., 1989, c. 113-170; **Ганс Йонас.** Гностицизм (Гностическая религия), СПб, 1998, c. 20-44; **Свеницкая И. С.** Тайные писания первых христиан, М., 1980, c. 35-66; **Յուլիոսի** Раннее христианство: страницы истории, М., 1988, c. 76-100; **История философии** (под ред. Г. Ф. Александрова и др.), Т. 1, М., 1940, c. 377-384; **Асмус В. Ф.** Античная философия, М., 1976, c. 503-526; **Майоров Г. А.** Формирование средневековой философии, М., 1979, c. 25 л. уаլլ:

² **Асмус В. Ф.** Античная философия, с. 509.

³ **Франкфорт Г., Франкорт Ф. А., Уилсон Дж., Якобсен Т. В.** Преддверия философии. Духовные жилища древнего человека, М., 1984, с. 201.

Կայսրության հոգևոր կյանքի ճգնճամառյան գործընթացներն ինչն էին պայմանավորում տարածած զարգացման այդ միտումները: Ինքնին Հակակառն է, որ ինչպես փիլիսոփայությունը, այնպես էլ կրոնները էլն կարող զարգանալ «պարիսր»՝ իրականությունից կտրված: Հասարակական Հարաբերությունների փոփոխությունների իրենցով պայմանավորում էին ինչպես փիլիսոփայության, այնպես էլ՝ կրոնադիցարանական Հոսուկազների գննադրումը: Եվ այդ Համակարգերի զարգացումն ու փոփոխությունն ակնհայտորեն ցույց էին տալիս, որ կայսրության հոգևոր խառնարանում հին կրոնադիցարանական համակարգերի միջոցով հոգևոր գննադրանքը գործնականում դարձել էր անհնարին: Սակայն գրանից անհեղին էլ չի հեռուեմ, թե Հոսուկական կայսրությունը իբր «նոր՝ համախարհային կրոնի կարիք ուներ», որը կարող էր «լքանցել Համախարհային կայսրությունը», որ «Համախարհային կայսրությունը Համախարհային կրոնով լրացնելու պահանջն զգանք էր ինքը՝ կայսերական իշխանությունը»¹, և որ «Հոսուկական զատկորովոյ ստրուկուրան ու ազգաբանորդ պատրանքային իդեալական միխիթարություն ավոյ կրոնը բրիտանուկություն էր»²: Այդ մտնեցումներն անընդունելի են մեկ շարք տեսանկյուններից: Նախ անուրանալի պետք է Համարել, որ «Հոսուկական պաշտոնական կրոնը» չէր կարող գտնվումներին «միխիթարություն առաջադրել, քանի որ չափից դուրս սերտորեն էր կապված Հոսուկական բուսպետական պետության հետ: Հիմնախնդրի լուծմանը չէր կարող նպաստել նաև արևելյան կրոնների ներթափանցմանս արդյունքում հոգևոր ապարիպ իմաստիկականիզմը»: Հակակառն, գաղափարները վկայում են, որ կայսրությունն իբր «հոգևոր ճգնճամար» փորձում էր Հայրենահարկ կրոնական բարեշրջումների միջոցով: Սակայն, ինչպես ցույց տվեց պատմական պրակտիկան, «Համարական» կրոն անհեղին փորձերը գործնականում դատապարտվում էին անհաջողության, ինչը կարելի է փաստել Հելիոգարալի, Մարկոս Ավրելիոսի և Դիոզդուսիանոսի կրոնական բարեշրջման փորձերի օրինակով՝ Նույնը պետք է տեսլ նաև կայսրերի պաշտամական արևելյան և արևմտյան մոդելների ներդրման Հոսուկական փորձերի մասին: Համատայլքների արյաբաշատուկ Համակարգերի ներդրումը ոչ միայն չնպաստեց կայսրության մոդուլուրդների հոգևոր միասնացմանը, այլև Հակակառն՝ էլ ամբողջականացրեց նրանց: Եվ, գերազանց, Հարկի մասնանշել նաև այն իրողությունը, որ բրիտանուկության վերաբերյալ Հոսուկական կայսրերը ոչ մի

¹ История философии (под ред. Г. Ф. Александрова и др.), т. 1, с. 380.

² Եսկյ սերլում, էջ 381:

³ Եսկյ սերլում:

⁴ Տե՛ս Իստորիա ֆիլոսոֆիա և կրակո ևզլոճոնի (пер. с чеш. И. И. Борята), М., 1991, с. 197.

զարտեր էլին տաճում: Դրա վկայությունն այն էլ, որ քննարկվող ժամանակահատվածում քրիստոնեությունը, կայսրության սահմաններում, ներարկվել է շարունակական հարմարների: Այդ ամենի պատճառով էլ 1-3-րդ դարերում քրիստոնեությունը Հարկազուծ էր պայթարել ինչպես իբր համար տարածին պաշտամունքների, այնպես էլ մշակութային խորթ Համակարգերի դեմ: Եվ քանի որ այդ գործընթացում եկեղեցական Համակարգից ներս առարկող ինչն տարբեր բրտունուներ, բրիտանուկությունն ինքը Ս. Գրքի սկիզբության, զոգմատիկայի, եկեղեցական կանոնների ու ծեսերի հիմնադրման իխտավորի էր զգում:

Չգետք է աչքաթող անել ևս մեկ նպական առանձնահատուկություն: 1-ին դարի երկրորդ կեսից սկսած՝ քրիստոնեական համարներն շարունակ հասնալով մեծ ներազդանքով: Երանյ հետ Համայնք էին ներթափանցում նաև անհատարբեր օտարածին սոփորույթներ, բարբեր ու զարգաբաններ, որոնք իրենց անուրանալի հետքն էին թողնում նաև Համայնքային զարգաբանախոսության ու արեհՀամակարգային կողմնորոշումների վրա: Գետք է նկատել ունենալ նաև ևս, որ միասնական, ազարտուն և կուսուսումնասիր զարգաբանության պայմաններում քրիստոնեական տարբեր Համայնքներ միմյանց հետ բանավիճում էին զոգմատիկայի, էթիկայի, պաշտամունքի ու ծիսակարգի և Հիուսուկ կենսազրույթային փաստերի շուրջ: Որոշ Համայնքներ Հիուսուկ Բրիտանուկի Համարում էին մարտեր, մյուսներն՝ աստվածամարք, երբորները՝ հազվեց գոյություն ունեցող Բան Աստված (Ադուս), ինչպես նաև՝ տարբեր կերպ էին պատկերացում շրջապատող աշխարհի հանդեպ իրենց փորձերունքն ու էթիկան: Իսկ այդ ամենը վկայում են, որ վաղ վկայում 1-3-րդ դարերում քրիստոնեությունը Հարկազուծ էր «արևի տակ տեղ ունենալու Համար» անհաշու պայթար մղել անտիկ մշակութային-զարգաբանիկական արեհներին և փիլիսոփայական բրտունուների դեմ:

Վաղ քրիստոնեության պատմության վերաբերյալ ճշգրիտ և Համակողմանի պատկերացում կազմելու Համար պետք է նկատի ունենալ և այն կարևոր հանգամանքը, որ նոր կրոնի կրոնադիցարների մեջ անընդհատ պայտար էր բերանում ինչպես ներստանաբանի (Հրեաքրիստոնեական կամ Հեթանոս քրիստոնեական) կրոնի, այնպես էլ հավաքական, հասկանալի փորձարանական հարցերի շուրջ: Կասկածից վեր է, որ եզգում ուղղությունների արեհային «փոխհարաբերությունները» ներազուցում էին միմյանց վրա, և որը հողի վրա մագլաբող բանավիճումը վկայում էին այն մասին, որ գրանցից և ոչ մեկը դեռևս չէր կարողանում պահանջվող մակարդակով բավարարել քրիստոնեության զգալանորդներին հոգևոր պահանջունները: Մե-

¹ История философии в кратком изложении (пер. с чеш. И. И. Борята), М., 1991, էջ 202.

անզամայն ընդունելի պետք է Համարել և այն, որ փոխներթափանցման այլ գործընթացներում քրոսոփով են նաև Հոգևոր ու Հայեցակարգային (փիլիսոփայական) տարածախոսություններ: Ընդ որում, քրիստոնեություն-անտիկ աշխարհ Հակամարտության լուծման որոնումներում սուպարնոն ինչում երբ հիմնական մտնեցմունք: Դրանցից առաջինը անվերապահ մերժում էր անտիկ արժեքների (Հայտնապես փիլիսոփայական ու Հոգևոր դերը և պնդում, որ «բարոյ ճշմարտությունները և Հակասարակա՝ բարին կարող է «բխել միայն ստովամային Հայտնությունից» (Տերտուլլանո): Երկրորդն ստովամանաչափական գործում լիովին ընդունելի էր Համարում անտիկ մշակույթի և փիլիսոփայության դիրք (գնտասիներ), իսկ երրորդը, բննարկվող հիմնահարցերի լուծման գործում միջին դիրք գրավելով, պնդում էին «ստովամային և փիլիսոփայական ներդաշնակ Համագործունեության կարևորությունը» (Հայկ Ղատաղովներ¹): Այլ որոնումները սուր կերպարանք էին ստացել Հայտնապես Լոգոսի բնութանում և փոքր գործության (նաև՝ վարձանարանության) ըմբռումների ուղղությամբ: Դրանից Հետևում է, որ 1-3-րդ դարերի Հերձմամներին ձևավորման Հնիմբում Հակատարային (զոգմատիկական) ըմբռումներինց գառ, կարևոր տեղ էին զբաղում նաև անտիկ մշակույթն ու փիլիսոփայական առբեր ըմբռումները, մասնավորապես՝ քրիստոնեության առաքելության (փրկության) կրոն, փիլիսոփայություն (գնոսիս), Լոգոսի Հրեական և քրիստոնեական լուծումներ): Հարցի շրջանակներում:

Վերոնշյալը, բնականաբար, լրացուցիչ պարզաբնույթներ կարելու են: Պարզունակ կլինի փոխներթափանցման և փոխազդեցության այլ գործընթացները գայմանավորել մեղադրմանի ազդեցությանը: Այստեղ օճանաչային դեր են կատարել փրկագործության, մաքր-Աստված աղբյուրների և վախճանարանական Հարցերը: Քրիստոնյա նորադարձների «խոսելիս առաջ», օրինակ, ձգտել է քրիստոնեական Հավատը շարադրել այնպիսի «կրոն Համակարգի տեսքով», ինչպիսին, սակեք, անտիկ (գառական) փիլիսոփայությունն էր: Երևաք գտնում էին, որ կեղծացին դրանով որ քաղցր ցեք կոնցենար հունեստոնական աշխարհում արտաքին մարտաքին վարներին դիմադրելու գործում: Այլ ինտելեկտուալների մի մասը, բաշխանոթ լինեով լոգոսի փիլիսոփայական բնութանամ, այն Հակադրում էր ինչպես Հրեական (փիլոսոփայ) Հայեցակարգին, այնպես էլ նորիտակարանությունն ուսումնասիրել և Համոզվում էր այն բանում, որ դրանով Հակադրվում է մարդկային Հայտնությանը և փառաբանում «Համամարդկային մեծագույն էությունը» (մաքր), որն էր «բանականությանը բառար փրկանում

էր յուսավոր կերել կամ բանական արարանների թագավորություն»: Երրորդներն էլ թագմաստվածությունը նույնացնելով Մ. Երրորդության Հետ, ձգտում էին «քրիստոնեական միաստվածությունը դիր պահել թագմաստվածությունից»: Եվ, վերջապես, ազդեցիկ թիվ էին կազմում նաև այն Հակասացայինները, որոնք քրիստոնեությունը փորձում էին փրկել «զոգմաստվածում», Համոզված լինելով, որ Քրիստոսի Ավետարանը ընդամենը իր նմանի և Աստծու Հետ ունեցած Հարաբերությունները ներառող «կասաբլարաբարյականության Ավետարան էր»:

Այլ իրողությունները միանգամայն այլ արժեքավորումներ ստացան այն Հոգևորականների կողմից, որոնք սկսեցին եռանդուն պայքար մղել սղանավորական մտնեցմունքում ու Հասունքների դեմ: Նրանք էլին Հատվում քրիստոնեության «զոգմատիկացման» առաջնորդող մտղիներին նաև և ձգտում էին յուրովի մեկնաբանել դպմանարանական խնդիրները: Աղանջների դեմ գաղափարական պայքարի անՀարժեշտությունը, ինչպես նաև խորեզմատիկ առաջնորդների ազդեցությունն ամրապնդելու ձգտումներն էլ նպատակներ էին կրել: Ավերպետական կառույցի Հնուագագ ամրապնդմանն ու ավանդության վրա Հնիմբում խասականուն կեղծացական վարչական կառույցի ու Հակատարային Համակարգի ձևավորմանը: Այլ ինտունների «միանական կամքի» օրինակալ գրևարություններ էլ Հանդիմանք տնկեկրեմոզովները, որոնք իրենց անտիկ վերցրեցին քրիստոնեական «տեսական մաքր» (ստովամասնականության) և Հոգևոր կյանքի վերականգնման ու կողմնորոշման դպմանի առաքելությունը:

Եվ մեկ բնորոյ առանձնահատկություն: Հայտնի է, որ առաջին երեք դարերում Հռոմեական կայսրությունը երկարատև պատերազմներ էր ձգում Հարեան ցեղերի և ժողովուրդների Հետ, որոնք ուղեկցվում էին զրովիցիաներում ծագող Հուդույաների ու ապատամբությունների դաման նկուններով: Դրա Հետևանքով սկսում էին արտում արՀետաներն ու երկրադործությունը, իսկ սովն ու Համահարակները պարբերական բնույթ էին կրում: Այս գործոնների ազդեցության էլ Հասարակական գիտակցության մեջ բարոյաՀողեքանական Հուսալրմամբության, նպատակների կորուստի, աշխարհում բնթացող Հասարակական-բաղաբական իրադարձությունների վրա ներազդելու անՀարևանության զգացողություն էր ձևավորվել: Մարդկային գիտակցության մեջ աստիճանաբար գերիշխող էր դառնում օտարական զգացումը, որն ընդավրժում էր դիպրարանական աշխարհընկալման մեջ գերիշխող «տեղեկրական ներդաշնակությունից օտարում» որակով:

Հռոմեական կայսրության ասարձբում սիգմալ կրեոստիփիլոսոփայական Հասունքների ներկայացուցիչները էլին կարող ձմասուզվել տերք Հոգևոր, մասվոր ու բարոյական ճգնաժամի կործանարար Հնուանքներով և փակեզուց գուռք գալու ելքեր էին որոնում:

¹ Տե՛ս նույն տեղում:

Այդ որոնումները արդյունք են Հանդիսացավ Եհհիբիցը, Համայն որի առապանքն աստիճանաբար ընկալվում էր իբրև Համամարդկային շարիք, մարդու գոյությունից անհրաժեշտ է մարդու էությունը ներհաստոյ որով: Այդ շարիքից պատմվում Համար նախապատմություն էր արվում անդրանցական ուժերին՝ Հայտնությունը և միտանքներին, որի մասնակցները Հավատում էին, թե դրանով իրենք Հաղորդակցվում էին «կյանքի ու աշխարհի ծագման անեղծվածային զազմանքներին»: Դարաշրջան կրոնական Հավատալիքների ճգնաժամը Հայթախարհում Համար փոխափայլական և աստվածաբանական մտքի շրջանակներում մշակվեցին խորհրդապատական տարրեր մտնեցան: Աստու, օրհնված աշխարհի գոյության, մարդու երկարելու կյանքի իմաստը, ինչպես նաև գիտելիք-Հավատ և ուղեկոչում-իտացիոնալ Հակաբանությունների շուրջ բուռն բնագրություններ և վեճարանություններ ծավալվեցին, որոնք ամենին էլ չուսմանափակվեցին իտանկիտուալ դրոբով: Դրանք ներթափանցեցին նաև աշխարհի և կրոնական աշխարհայացքների միջավայր, Հետևաբար՝ նաև մարդու կողմից աշխարհի «Հողանկան յուրացման» և «ուրբյնիկոլ-անկանային վերադրման», շտրի և բարու Հասարակական-պատմական իրողությունների և այլնի նկատմամբ մարդու անձնական կենսադիքորոշման դրոբ:

Եթե փոխափայլական մեծեր աշխարհ ենկալում և բացատրում էլ ինքն իրենով և մարդու ու Հասարակության բարոյական վերափոխումը ստեղծում էր ներքից, միանգամայն այլ էր աստվածաբանական մտնեցում: Այն Հնեմով էր անդրանցական օրհնվածների և աստվածաշնչական Հեղինակների փաստարկների վրա, շեղեցում: Եր պաղերիկ Աստված ուղեկոչող փաստարկման ենթակա է: Այդ Համատեքստում Աստված բնութագրվում էր իբրև Հզոր խորհրդապաշտական ուժ, որը կառավարում է կյանքն ու մահը, բնության ոլիմը և արժանահավատ է դառնում միայն Հայտնություն մասնակց:

Փոխափայլությունը բոլոր ժամանակներում Հանդես է եկել իբրև Համադրող և Համադրող գործուն, գիտելիքի ընդհանրացված մե, որը կրել է լիտուրգիայի և Հիմնականում անՀասկանալի է եղել ժողովրդի ստեղծմանը և փոխի Համար: Բննարկվող դարաշրջանի փոխափայլական ուսմունքները ձգտում էին մարդկանց ազատագրել նախապատմություններից, կրոնական երկյուղից, կրոն փոխարինել փոխափայլությամբ, բայց դա չէր կարող Հանդուրժար պատվով: Հոմոնական կայսրություն ներքալանցում արևելյան կրոններն իրենց բնորոշ խորհրդապաշտական պատկերացումները առաջին պլան մղեցին փոխադրման պատկերացումները, որի արդյունքում անձնական փրկություն և Աստու Հեռ մեծաշուք ձգտումները Համարվեցին կյանքի իմաստ ու նպատակի առաջին: Արեկից-արևմուտք արև-

բայի այդ Հակադրությունը միանգամայն նոր Հողեքը իրավիճակի պատճառ դարձավ: Կրոնափայլական գրականություն մեջ այդ յուրահատուկ փոխանցումն արժեքով է Հիմնականում քաղաքակրթական Համակարգերի խաչավորման տեսանկյունից, քանի որ «եզրուպակն ժողովուրդներին աստիճանաբար ներարկելով նրանց Համար խորթ աշխարհայացք՝ այդ պատմությունները խորխրեցին անտիկ քաղաքակրթության շերտ (ընդհուր մեր է՝ Գ. Ա):»

Հողեք այդ դեզարդացիայի օրինալի արդյունքն էլ հանդիսացավ անտիկ հասարակության անկասկի անկումը: Ակտիվ կենսադրոնություն (տեսական լուծումները) իր տեղը գիշից անՀաստապատական որոնումներին, այն դեպքում, երբ «Հուսական և Հոմոնական Հասարակությունը խորթվում էր անՀաստական սկզբունքները Հասարակականին, քաղաքացուր՝ պետությանը ենթարկելու Հիմքի վրա, դա պետության բարորությունը և անժամանկությունը դարձնում էր վարքագծի բարձրագույն չափանիշ, ավելի բարձր, քան անՀատի անընդրիմյան (կամ այսուաշխարհի) բարեկեցությունը»:

Հասարակական կյանքում մեկտրված Հողեքը նոր իրավիճակի արժատրոբից արժեքային նոր Համակարգ Հասարակության և պետությանը ծառայելու Հանդես պատրերություններ, ներկայի և շրջապատող իրականության Հանդես արՀամարՀանքի սերմանում, որի փոխարեն առավելափայլ կարևորվեցին անՀաստական արուսմունքն ու Հավիտանական կյանքի նախադասարտուփելու բերանումները: Եվ, կեն անտիկ աշխարհայացք Հնեմով էր բանականության և ներդաշնակության Հիմքերի վրա, մարդուն դիտում էր իբրև բնական աշխարհի մի մասը, պայ, մեկտրված կեանքի արդյունքում, այն իր տեղը գիշից դիցարանական մասնազուրկում, արժատարանական, զգայական-անձնագրված սեմոլեներին, իսկ իտուրական և գերբնականը սեանցին ընկալվել զգացմունքային կերպով: Կենսաբանական մասնազուրկություն, ինչպես Հայտնի է, Հնեմով էր զգայական կենսիկերի և անՀաստական աշխարհագրվածման վրա և անտեսում էր պատճառահետևանքային կապերն ու Հարաբերակցությունները, թյուրբարոնում ցուցարեում վերացական Հասկացություններ Հանդես:

Այդ ամենի արդյունքում 2-3-րդ դարերի աշխարհայացքը դերակաշնուցիկ բնորոշվում է զիջարանական մասնազուրկությամբ, բարդ սեմոլեիկա սեանցող Համադրողային որակներով, որտեղ վերացական Հասկացությունները Հանդես են գալիս ինքնուրույն գործող Հակների որակով: Խորհրդա-

Յ. Ջ. Յրեզը, Ոսկե ճյուղը, Մուգոբյան և կոմի ուսումնասիրության, Երևան, 1989, էջ 420.
Նույն տեղում:

պաշտական-գիշարանական ավանդույթունները ներմուծվում են ժամանակի բարդ ու Հակասական քաղաքակրթական հոգևոր կյանքի ոլորտ, որ կարևորում էր ներքին հոգևոր փորձ ու միասին մերձեցումը: «Արևիկյան կրոնների տարածման հետ, որոնք այն միայն էին ներշնչում, թե կյանքի միակ արժանի նպատակը սատուս հետ միանալը և անձնական փրկությունն է, իսկ պետության բարորությունն ու նույնիսկ նրա բուն գրությունը դրանց Համեմատությամբ ունիչ չարժեն, իրադարձությունը կտրուկ փոխի: Այդ համարյալան ու քաղաքագրիկ ուսմանը բնորոշ են անխուսափելի Հետեանքը եղան Հավատացյալների Հարանուն նահանջը Հասարակությանը ծառայելուց, անձնական, հոգևոր աղբյուրների փրկանքի և արՀամարչանքի երևան գալը շրժապատող կյանքի նկատմամբ, որի մեջ նրանք սերում են տեսելի ոչ պայելին, քան Հազիտեանյան կյանքին նախորդող ժամանակավոր փորձությունն»:

Այդ ամենից արամարտների կարելի է բնեցնել, որ Հռոմեական կայսրությանը ստեղծական-քաղաքական անկումը ուղեկցվում էր մտավոր-քաղաքական բնորոշումների անկմամբ և աննորյա բարերի բարոյազրկմամբ: Ինտալիտուտությունն ու խորհրդապաշտությունը լայն տարածում ստացան Հասարակության տարբեր շերտերում: «Նեղ», ցանկ «կենցաղն ու բարերը» սահմանափակեցին նաև մարդկանց մտահորիզոն ու աշխարհայացքը, որի Հետեանքով էլ գործնականում «... չկար բարբրությանն որևէ անհնձիթ սնահավատություն, որն իր կողմնակիցները լուսնեմար Հռոմում»¹: Այդ ամենն ուղեկցվում էին զարաբշրանի հոգևոր իրականությունը բնութագրող մեկ այլ միտումով ևս. «Հեթանոսությունն ու հատական գոյի ձևով ստավաններին նույնացնում էր բնության ունից հետ և նման ստավանների հետ Հողորդակցվելու միջոցով սերտորոշվող նույնության արտափելի ֆունկցիոններում մարդկային սրտեր: ... Այդ գիտքում մարդու կամրի փրա խորհրդապաշտական տարրը Հզորագին ճնշում էր քաղաքական անկումային ուղեկցությամբ»:

Մորհրդապաշտական կրոնափիլիսոփայական Հայացքների արտադրումը և այն ուղեկցող «զուրկեղ» մետքն ու աշխարհի պատկերների լեցուն միասերխանները՝ մարդկանց «առաջնորդում էին» զեպի այլափոխություն, Հազիտեանյան կյանք և մարչ մեկնարանում էին իրեն անցյալ զեպի անհամարչություն: Հենց դրանով էլ այդ պատկերացումներն ու միասերխանները մարդկային կյանքին յուրահամար «եթր իմաստ և բովանդակություն էին Հաղորդում», արագահա կյանքի Հորձանուսում նրանց մտ

¹ Չ. Ջ. Յրնգեր, Եզլ. աշխ., էջ 420:
² Իստորի փիլոսոփա (под ред. Г. Ф. Александрова), с. 380.
³ Тихомиров П. А. Религиозно-Философские основы истории. М., 2004, с. 85.

նկատրում էին «պաշահություն», «անժտանդություն» ու «միթարություն» զգացում:

Աշխարհի և Աստու. հոգու և մարմնի միանություն և ներքին կապի մասին նախկին պատկերացումները փոխարինվեցին Հակադիր ուսմանը ներքին և Համապատասխան պաշտամունքային բնորոշումներով: Անկուսման այդ գործունեի պզդցությամբ էլ Հասարակական դիտակցության մեջ աշխարհն սիսից ստորադասվել, դիտարկվել իրեն «հոգու բանա», իսկ հոգու փրկությունը Հետաքրքիր Համազից միայն մի ուղեգրում՝ դեպի Աստուական աստիճանական վերադարձի» միջոցով: Գեղերիտող դարձան նյութից, մարմնից ու աշխարհից Հրամարչվում և այդ ճանապարհով փրկություն հասնելու որոնումները, որոնք ամենից առաջ կազմվեցին «մասնազուրկություն» և «անձնական մաքրագործություն» գաղափարների հետ:

Համեանական կայսրության մեջ տիրապետող Հելլենիստական մշակույթի ժառանգությունն, իր մեջ միավորելով արևելյան կրոնական մտանդություն և հուսեանական փիլիսոփայության տարրերը, երապարակ նետց կոստալիտիզմը, որն ազգային պետության փոխարեն կեցության նպատակը՝ փրկությունը, տեսնում էր Համաշխարհային միավատության ստեղծման մեջ: 2-3-րդ դարերում ստեղծված հոգևոր և Հասարակական-քաղաքական ծայրաստիճանի բյուր իրականության պայմաններում ազգային կրոններն այնու չին կարող լինին րավարարի մարդկանց հոգևոր-կենսական պահանջումները: Վերլուծարանելից զերհեյնս պատճառները որոնում են «կեցության Հեթանոսական փիլիսոփայության» մեջ, որը «կյանքի առաջնային սկզբունքի» մեկնարանությունը սերտորեն շաղկապում էր ողկապատության և դիշարանական պատկերացումների հետ: «Կեցության Հեթանոսական փիլիսոփայությունը՝ չկարողացավ բարձրանալ «Անհատ Աստու», «Արարչի» բնորոշման մակարդակի, այն աստանվում էր երկու պատկերացումների՝ քառսից «ինքնանին սերման» միջոցով աշխարհի առաջացման կամ էլ՝ համացանալի միջոցով իր լույթությունից աշխարհի արտազդվման միջև»:

Դրանով էր պայմանավորված այն, որ սապարեզում գանվող ազգային կրոններ իրենց ներքին անկարողության արդեն սպառել էին իրենց և ի դրուն չէին առաջնորդելու փրկության կյերի կամ որևէ այլ Համակարչային բնորոշում: Սուր կերպով այնպիսի կրոնի անհրաժեշտություն էր զրաջվում, որն, անկախ ազգային և հասարակական պատկանելությունից, կկարողանար միավորել համաշխարհային կայսրության ազգություններին: Իսկ դեպիային (ստավամային) փրկիների մասին կրոնական և աշխարհաքաղաքին

¹ ՏՆ Լույս սերունդ, էջ 96:

պատկերացումները վաղուց հայտնի էին բացասապես արևելյան երկրագործական պաշտամունքներում, երեսական կրոնում և Լոզոսի մասին Փիլոն կերպարաներում: «Բայց բանի որ կրոնական այդ նոր ուսմունքները ծագել էին Հին, ազգային շրջանակներից սահմանափակված կրոնների ներսում, դրանք չէին կարող ստույգ կերպով Հաստատվել և զանգվածային արարածում ուժեղանալ»¹:

Հիլլենիստական աշխարհայացքին բնորոշ կոսմոպոլիտիզմի և ինդիվիդուալիզմի կողքին զճանորդ զեք և նշանակալիցուն ձևաք բերեց նրա մյուս Հատկանշական ու կարևոր բաղադրիչը՝ կրոնական սեկյուլարիզմը, որը դրսևորվում էր արեւելյան կրոնների, պաշտամունքների ու ժողովրդական Հավատալիքների արևմուտք թափանցումով և իրենց բնորոշ մոզական, ծիսական միտաբերական գործողությունների ու օտար պաշտամունքների արմատավորմամբ: Կրոնական սեկյուլարիզմն էլ նախադրյալներ ստեղծեց և հիմք հանդիսացավ միաստվածություն արմատավորման համար: Այս մարտունակներ, արամագրություններն ու աշխարհայացքը ստեղծվում և մշակվում էին ինչպես փիլիսոփայական ուղղությունների, բարոյափիլիսոփայական Հոսանքների, այնպես էլ կրոնական Համակարգերի շնորհիվ, որի Հետևանքով քաղաքացիական Հասարակության շահերը նախնապես մզվեցին: «Այդ եսամոլական ու բարոյագուրբ ուսմունքը բնորոշեց և նշանակալի Հետևանքը կրոնական Հավատացյալների նահանջը Հասարակությանը ծառայելուց, անձնական, Հոգևոր սպորտների վրա սեռեցվելը և արամագրական երևան գալը շրջապատող կյանքի նկատմամբ, որի մեջ նրանց սկսում են տեսնել ոչ ավելին, քան Հավանական կյանքին նախորդող ժամանակավոր փորձություն»²:

Անձնական, բնտանեկան-կենցաղային ու մասնավոր խնդիրները Հրատալ ու առաջնային դարձան: Փիլիսոփայական միաքը տեսական Շարժադրույթներից անցում կատարեց բարոյական Հիմնահարցերի: Այդ Համատեքստում միանգամայն օրինաչափ պետք է Համարել «կենցաղի նկատման կրոնական փիլիսոփայության» ինչպես տեսական, այնպես էլ առարական մակարդակներում տեղ գտած օրակական փոփոխությունները: Տեսական մակարդակում այդ փոփոխությունները զրևսերվեցին այն բանում, որ ստրիկյան, էպիկուրական, սեկսպիկական և այլ փիլիսոփայական դպրոցներն սկսեցին իրենց զլխավոր ուշադրությունը կենտրոնացնել բարոյագրական, մարդկային կյանքի իմաստի, երջանկության օրոնման և նմանատիպ այլ վերացական խնդիրների վրա, իսկ առօրյա գիտակցությունները

¹ История философии (под ред. Г. Ф. Александрова), с. 381.

² Տ. Տ. Յրեղեր, Ոսկե ճյուղը, էջ 420:

նշված փոփոխությունները աշխարհայացքային արմատական փոփոխությունների պատճառ դարձան: «Ժողովրդի պատկերացմամբ ամեն ինչի նկատմամբ լիակատար արհամարհանքով Համակված և կրոնական Հայեցողության մեջ Հափշտակության աստիճանի խորատու զգված սուրբ եզրնազորի այդ կատարելատիպը եկավ փոխարինելու ինքնամտաց Հայրենասեր Հետախնի կատարելատիպին, որը պատրաստ էր կյանքը զոհարարել Հանուն իր Հայրենիքի բարօրություն: Մարդկանց, որոնք Հայացքը ուղղված էր աստուծո երկրային արքայությանը, երկրային կյանքը սկսեց թվալ աննշան ու խղճուկ: Այսպես ասած, ծանրության կենտրոնը ներկա կյանքից փոխադրվեց գաղից կյանքը և ինչքան այս փոխադրումից շահեց մի աշխարհային սուրբ նույնքան էլ տուժեց»³:

Այդ Հոգևոր «բաստի» բազմաթիվ օրակների եկեղեցական Համակարգ ներթափանցելու օրինաչափ արդյունքն էլ Հանդիսացան 1-3-րդ դարերի քրիստոնեական Հերձվածները ավանդությունից շեղված Հոգևոր-մշակութային աշխարհընալույթները:

³ Նույն տեղում, էջ 420-421:

ՎԵՂ ԲՐԻՍԱՆՆԵՐԿԱՆ ՀՆԵՐՉԱԾՆԵՐԻ ԶԵՎՎՈՐԱԿԱՆ ՓԼԵՒՍՈՓԱԿԱՆ ԸՆԴՈՒՄԵՐԸ

Գ. Է. Սարգսյան

Ինչպես վիճալու են սկզբնաղբյուրները, 1-3-րդ դարերում Հռոմեական կայսրությունում տիրապետող Հասարակական-քաղաքական և բարոյական միջոցառող, ինչպես նաև Հորդոս միջովայրը նպաստեցին Հերթաճող Հասարակական ձևակերպման և տարածմանը: Անկախ էին աղբյուր Հասարակական ձգտումների, տեսական Հետաքրքրությունների, ճանաչողության և իմացության Հանդեպ գերիշխում էր կատարե, Հրաժարումը ցուցաբերող գաղափարային նշանաբանությունները:

Այդ պայմաններում Հին (դասական) սեփականիցիվը փոխարինվեց ոչ սեփականիցիվով, որի նշանավոր ներկայացուցիչը Կարենազը, չնայած որ քննադատում էր հրեական Հավատը, այնուամենայնիվ, գործնական առումով Աստուծու գաղափարը դիտարկում էր իբրև Հավանական և օգտակար: Հավաստեցնող վերաբերմունք դրսևորելով փիլիսոփայական բոլոր Հաստեքների նկատմամբ՝ նոր սեփականիցիվներ թխում էին դրանց կողմից առաջարկված նշանաբանությունները, ինչն էլ էր իբրև Հանդեպից կիրկոլիտի մի՞ ոչ քննադատական, օւրբյակտիվ կերպով տարբեր գաղափարների միջման: Կիրկոլիտը նախապես մեծ Հանդուքային ունեցավ հրեոի փիլիսոփայության տեսքով: սակայն, կարճ ժամանակ անց, այն փոխարինվեց կրեոնական սեփականիցիվով: Իսկ որպեսզի Հետևում է, որ 1-3-րդ դարերում փիլիսոփայական դպրոցների մերձեցմանը Համար կապող օղակ էին Հանդեպում հրեոի փիլիսոփայական ըմբռումները: Հռոմեոստմեական աշխարհում 1-3-րդ դարերում սեղ գտած կրեոնական սեփականիցիվ կրեոնափիլիսոփայական շարժում էր, որը գերազանցապես տարածվել էր հասարակության մերձեցման, մինչևևի՛ ժողովրդական՝ ստորին շերտերում տարված էին արևելյան պաշտամունքներից:

Հանդեպ գալով «... միջյանց Հեո փոխազդեցության մեջ գտնվող կրեոնական տարբեր տարրերի, Հավատալիքների ու պաշտամունքների միջփորձան, միաձուլման օրբյակտիվ գործընթաց և իրեն յուրաՀատուկ կրեոնազմաբով աշխարՀայացքի, աշխարՀողաբանության ու պաշտամունքի՛ նոր, ամբողջական Համակարգի՛» օրակնի՛ հրեոնական սեփականիցիվը բուձողաբանում տարբեր և այն կատակոնիցիվներ, որ Հռոմեական կայսրությունը

չստորագրված էր պաշտամունքների տարածման մեջ, և համախ ինքն էր հասուն միջոցներ ձևակերպում իրախոսելով արևելյան պաշտամունքների տարածումը: Կրեոնների սեփականացման նշված գործընթացն ուղեկցվում էր դիքարանական աստվածների թվի կտրուկ կրեոնաձուլով, ինչն, այդ օրամասերում, վաղ թև ուշ պեոաբ է Հանդեպներ միաստվածուխյան:

1-3-րդ դարերի Հռոմեական կայսրության կրեոնական իրավիճակի բնական վերլուծությունը թույլ է տալիս փաստել նաև, որ ուշ սեփականիցիվ ազդեցությունում ժամանակի բնդՀանում և իշխող տարածությունը գտնուում է փիլիսոփայական ճանաչողության Հնարարությունների Հանդեպ կատարե, որի Հետևանքով փիլիսոփայական դպրոցներում բացակայում են ախտիվ տեղեղազորական օղին ու տեսական սրտումները: Ասանկի դեպքերում սեփականիցիվ Հանդեպում է նաև կիրկոլիտի՛, ընդհանրվով, որ նշանաբանային օրդուկի մաս առկա է ինչպես ստանկի վերջում փիլիսոփայական սանն մի Համակարգում, այնպես էլ կրեոնական Հաստեքներից յուրաքանչյուրում: «Այսպիսով, սեփականիցիվը տեղիկյան դոգմատիկայով և կրկուրական փիլիսոփայության իրենով ձևակերպում է դեպի կիրկոլիտից ուղղված միակողմնի մի կամուրջ՝»¹

2-րդ դարում փիլիսոփայության դեպի կիրկոլիտից կոմեոտրունար մեծացումը նպաստել է նաև Հռոմեական քաղաքական իշխանության Հզորանումը: Պահանջվող status quo-ի պահպանման Համար կայսրության քաղաքական վերահստվող, գործնականում, «բնորում-վերցնում էր» տարբեր փիլիսոփայական դպրոցների կողմից առաջարկված «գործնականապես օգտակար ու արժեքավոր» դրեթի բոլոր սկզբունքները: Հնդ օրում, նախապատմություն էր օրդուկ Հասարակ կրեոնաբարոյական ուսումնեքներին: Պահեցյա Անտիոքները, օրինակ, առաջնային էր Համարում «բոլոր առաքիլությունների անխցելի կապը»: Նախանշված այդ ճանապարհով առաջնորդվեցին նաև գաղաքՀանի այնպիսի Հայտնի փիլիսոփաներ, ինչպիսիք էին՝ Տիցերոնը, Վաուերը, ստորին շերտերում և մերձեք: Եվ, քաղաքական

¹ Калустян Н. С. Особенности эволюции религии. М., 1984, с. 13. www.armenianlib.org

² Ասանկոտական գրականության մեջ կրեոնական սեփականիցիվ և կրեոնական էլեկտրոնիզմ միջև հատուկ ահանազատում է անցկացվում: Գիծը ընդունելով այն իտոլոգյունը, որ կրեոնների էլեկտրոնիզմը ընթացում տեղի է ունեցում փոխաբարտություն մեջ գտնվող գաղախոսական տարբեր հասկանաբանի պլեթաում, միակողմ, համալրվում է, որ այդ գործընթացում դրսևորում են փոխերթապագումը հարողախանությունը, վերափոխումը, կառուցվածքային շեղումը (տարբերումը), գաղախարական օրդուկի նյութի ժամանցորդությունը, հավախի և պաշտամունքի պատկերակալի կրկնություն ու ճյուղախանությունը և այլն (տե՛ս Կալուստյան 1984, 242, աշխ. էջ 14-15): կրեոնական սեփականիցիվը թույլ է տալիս առանձնացնել կրեոնական կրեոնական իրենը ընդհանրությունները: Իսկ կրեոնական էլեկտրոնիզմ իրենից ներկայացնում է համալրական հավախապատկերների մի այնպիսի «միաձուլում», որն ունի արտաքին ընդառաջություն, այսինքն՝ չունի իտրդակալ հեղուղը – հասարակական արձանագր (տե՛ս ճուլյս տերղում, էջ 16):

³ Покосов М. Э. Гностицизм II века и победа христианства Церкви над ним. Брюссель, 1991, с. 46.

նի որ էկկեկտիկն արտահայտում էր ժամանակի ոգին և տրամադրում թույլեռևուտի կարգադասով փոխարինել անկում ապրող փրկիտոփայտի վայրը:

Էկկեկտիկի գլխավոր թեորությունը կոնկրետ սկզբունքի րացակայություն էր: Փորձելով վերացնել սեկվարը, ցրել կազմաններն ու տատանումներ այն միասնակրեկն իրար էր միավորում տարբեր դարոցներ և ուսմունքներն առանձին մասեր: Ենթ հռոմեական կայսրության Հոգևոր հզոհամով պայմաններում փրկիտոփայտի շուրջը դարոցները գերազանցակն զբաղվում էին էթիկական հիմնահարցերի մշակմամբ՝ փորձելով հրոնները շրջանցելով յուրաքանչյուր մարդու ուղղել զեկի տարրերի կյանք, սոր պարզ էր մի բան, որ «երկրային զբախտի» մասին փրկիտոփայտի առմունքը չէր կարող բավարարել կրոնական գիտակցության պահանջները Չափազանց անհայտ էր և այն, որ րարյալակոնությունը անկարող էր փոխարինել կրոնի: Հռոմեական կայսրության մոլորությունների կրոնական արհամարհանքները արմատավորումը Հեկկեկտական փրկիտոփայտի շարժազդեցիկ տեղի առև նահանջի խորհրդապատասխանի առևն, որն ուսուցանում էր, որ ոչ թե բանական, այլ առավելակ հայտնության միեղացով կարելի է իմացություն և երանություն (փրկություն) ձևեր բերել: Արմատավորվում էր և այն մտայնությունը, թե նշված հայտնությունը անարևուն է՝ հնգարյան կրոններում և՛ կրոնափրկիտոփայտական ուսմունքներում:

Հայտնութենական կրոնափրկիտոփայտական ուսմունքներում Աստուրեկավում է իբրև զգայական ու մատերիական մեղավոր աշխարհից վկայանանք բարձրագույն, անդամացական ու անսահմանափակ էակ, որի նսկակա հաստատուր համար անհրաժեշտ են միջնորդներ: Իսկ հոռմեական իրականության մեջ այդ որակով կարևորում էին հասկանալի միտերաները և մարագործան մանրեր: Հասարակական միջավայրում խորժող կրոնական ձգտումներն ու պահանջները խորթ չէին նաև ժամանակի փրկիտոփայտի շարժում, որի հետևանքով էլ հայտնությունը հռավակցե իբրև փրկիտոփայտյան, ինչպես նաև՝ ցանկացած կարգի բարձրագույն գիտեցիկի իմք: Եվ ենթակայեցիկը լայն նախարարյան էր ստեղծել փրկիտոփայտի դարոցները նշարտացուցիկ շահեղ կազմած սերմանելու գործունեությամբ ոգուն, որի հետևանքով էլ հայտնությունը հռավակցե իբրև փրկիտոփայտյան մարի նման անկարող զեղով ինքնուրույն Հաղթահարի ստեղծված Հոգևոր հզոհամով:

1-3-րդ դարերի Հռոմեահռոմեական աշխարհի Հոգևոր այդ հզոհամով պայմաններում էլ սուր պահանջ զգացվեց նշարտության աղբյուրը որոնել մարդկային բանականության և զրեկելիքի դուրս՝ առավելակ

